



«Երևանի մետրոպոլիտենի վերակառուցման ծրագիր», Փուլ II

Իրականացման 22.08.2014 - 30.08.2024
Ժամանակահատված:

Այլ Երկրներ:
Armenia

ԵՄ ներդրում: € 5 000 000

Ընդհանուր € 16 000 000
բյուջե:



Սոցիալական ցանցերում օգտահաշիվների հղումներ:
facebook.com/yermetro?mibextid=LQJ4d

Նախագծի

Նկարագրություն:

Երևանի մետրոպոլիտենի ենթակառուցվածքները, ներառյալ գծերը, շարժակազմը, էլեկտրաէներգիայի բաշխման համակարգը, էլեկտրամատակարարումը, ազդանշանային համակարգը, հեռահաղորդակցությունը, էլեկտրամեխանիկական կայանքները, պահեստները և արտադրամասերը, գործում են 1981 թվականից՝ գրեթե առանց կապիտալ վերանորոգման: Իրականացվել են միայն ընթացիկ տեխսպասարկման աշխատանքներ, ինչի հետևանքով մետրոպոլիտենի ենթա կառուցվածքները զգալիորեն վատթարացել են: Այնուամենայնիվ, մետրոպոլիտենի համակարգի ամենալուրջ խնդիրներից է նաև վագորդային թունելներ ստորգետնյա ջրերի ներթափանցումը:

2010թ.-ի մարտին Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկը (ՎԶԵԲ) ՀՀ կառավարության հետ ստորագրեցին 5 մլն եվրո վարկային համաձայնագիր Երևանի մետրոյի վերակառուցման ծրագրի փուլ I-ի համար: Եվրոպական ներդրումային բանկը (ԵՆԲ) և Եվրամիության Հարևանության Ներդրումային Գործիքը (ԵՄ ՀՆԳ) իր հերթին յուրաքանչյուրը հատկացրեցին 5 միլիոն եվրո վարկ և դրամաշնորհ համապատասխանաբար: ՎԶԵԲ-ը նաև միջոցներ տրամադրեց («տեխնիկական աջակցության ֆոնդ» դրամաշնորհ»), որը ներառում էր խորհրդատուի ֆինանսավորումը:

Երևանի մետրոյի վերակառուցման ծրագրի Փուլ I-ը /ավարտված է/ և Փուլ II-ը, որոնք, ինչպես նշվեց, ֆինանսավորվում են նաև ԵՆԲ և ԵՄ ՀՆԳ կողմից, չափազանց կարևոր են եղել Երևանի մետրոյի անհապաղ կարիքները հոգալու՝ նրա ենթա կառուցվածքները վթարային տեխնիկական իրավիճակից հանելու համար:

Ակնկալվող արդյունքներ:

Ծրագիրը կհանգեցնի մետրոպոլիտենի գծային տնտեսության շահագործման անվտանգության և հարմարավետության բարելավմանը:
Ֆիզիկական ներդրումների արդյունքում ձեռք բերված արդյունքներից բացի, Ծրագիրը թիրախավորելու է հետևյալը՝
Բարելավված շուկայական համակարգի ներմուծում, ծրագիրը կաջակցի Երևան քաղաքին ունենալ հավասարակշռված շուկայական համակարգ, կարգավորելով դաշտը և աստիճանաբար բերելով քաղաքային տրանսպորտի սպասարկման կազմակերպման որակի նոր մակարդակի ապահովման: